ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արդարադատության նախարարի տեղակալ Օկսաննա Աբրահամյանի՝ Իսպանիայի Թագավորություն (Վիտորիա-Գաստեյս) գործուղման արդյունքների վերաբերյալ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Օկսաննա Աբրահամյան, Արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Իսպանիայի Թագավորություն (Վիտորիա-Գաստեյս), 2025 թվականի հոկտեմբերի 6-ից 10-ը:

Հրավիրող կողմը՝ Բաց Կառավարման Գործընկերություն (Open Government Partnership, OGP)

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Բաց Կառավարման Գործընկերության գլոբալ գագաթնաժողովին (OGP Global Summit)՝ բարձր մակարդակի այցին:

Քննարկված թեմաները՝ Քննարկվել է Գագաթնաժողովի շրջանակում քննարկվել են բաց կառավարման ապագային, արդարադատության ոլորտի բարեփոխումների, թվային ենթակառուցվածքների և քաղաքացիական մասնակցության խթանմանն առնչվող հարցեր: Հատուկ ուշադրություն է դարձվել ապատեղեկատվության դեմ պայքարին, տվյալների թափանցիկության բարձրացմանը, մասնակցային մեխանիզմների (մասնակցային բյուջետավորում, ինստիտուցիոնալացված հանրային ներգրավում) ընդլայնմանն ու տեղական ինքնակառավարման մակարդակում դրանց կիրառմանն ուղղված գործնական մոտեցումներին:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝ Արդարադատության նախարարի տեղակալ Օկսաննա Աբրահամյանը 2025թ. հոկտեմբերի 6-ից 11-ը մասնակցել է Բաց Կառավարման Գործընկերության (OGP) գլոբալ գագաթնաժողովին, որը տեղի է ունեցել Իսպանիայի Թագավորության Վիտորիա-Գաստեյս քաղաքում: Հայկական պատվիրակությունը գլխավորել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավար պարոն Արայիկ Հարությունյանը:

Գագաթնաժողովի ընթացքում պատվիրակությունը մասնակցել է բարձր մակարդակի երկխոսություններին, երկկողմ հանդիպումներին OGP ղեկավարության հետ, ինչպես նաև թեմատիկ նիստերին՝ նվիրված բաց կառավարման ապագային:

Գագաթնաժողովի ընթացքում Հայաստանը պաշտոնապես դարձել է OGP-ի Կառավարող կոմիտեի անդամ, ինչը կարևոր ճանաչում է Հայաստանի՝ թափանցիկ, մասնակցային և հաշվետու կառավարման ուղղությամբ իրականացվող անընդհատ ջանքերի համար: Գագաթնաժողովին մասնակցել են Իսպանիայի վարչապետ Պեդրո

Սանչեսը, բազմաթիվ միջազգային գործընկերներ և քաղաքացիական հասարակության առաջնորդներ:

Օկսաննա Աբրահամյանը հանդես է եկել «Բաց կառավարման ապագան. համագործակցություն, գործընկերություններ և բազմակողմ մոտեցումներ» բարձր մակարդակի գլոբալ երկխոսությունում՝ անդրադառնալով հարցին, թե ինչպես է արդարադատության ոլորտի բարեփոխումը նպաստում բաց կառավարման առաջխաղացմանը Հայաստանում և ինչ նորարարական մեխանիզմներ են առավել ազդեցիկ: Տիկին Աբրահամյանը ներկայացրել է Հայաստանի արդարադատության համակարգի թվային փոխակերպման փորձը՝ ընդգծելով վստահության և բաց կառավարման կապը թվայնացման գործընթացներում:

Գագաթնաժողովի ընթացքում հայկական պատվիրակությունը հանդիպել է OGP-ի գործադիր տնօրեն Էյդան Էյակուզեի և նրա թիմի հետ՝ ներկայացնելու Հայաստանի առաջընթացը շահառուների իրական սեփականատերերի թափանցիկության և արդարադատության թվայնացման ուղղություններով: Նշված առաջնահերթությունները բարձր գնահատականի են արժանացել OGP ղեկավարության կողմից՝ հաշվի առնելով այն գլոբալ մարտահրավերները, որոնց բախվում են նույնիսկ կայացած ժողովրդավարությունները:

Տիկին Աբրահամյանը գագաթնաժողովի ամբողջ ընթացքում վարել է ակտիվ հանրային հաղորդակցություն անգլերեն լեզվով՝ շեշտադրելով, որ արդարադատության ոլորտի թվայնացումն իրապես գործում է որպես վստահության և առաջընթացի հիմնական խթան Հայաստանում:

Արդարադատության նախարարի տեղակալ՝

Օկսաննա Աբրահամյան
16.10.2025թ.